

միտք՝ բանակեցաւ Տումանշի երկրում, որի ժողովուրդը նորա հետ խաղաղութիւն հաստատեց:

118 թ. Մըրվան ի Մուհամմէ արշաւեց Հայաստանից եւ մտաւ Ուռնիսի՝ երկիրը երեք կիրճերից, Ուռնիս փախաւ խաղաղաց մտաւ եւ մտաւ մի ամրոց, որ Մըրվան պաշարեց, գնելով նորա առջեւ իջնախի: Ուռնիս սպանեցաւ. սպանողը ուղարկեց նորա զուգար Մըրվանին, որ ցոյց տուեց այն ամրոցաբնակներին. սոքա անձնատուր եղան նորա դատաստանին. Մըրվան սպանել տուեց ուղղակիներին, իսկ կանանց գէրի տարաւ:

119 թ. Մըրվան ի Մուհամմէ արշաւեց Հայաստանից եւ մտաւ Ալանաց երկիրը, այնտեղից չուեց գնաց խաղաղաց երկիրը. անցնելով Բաշառնէրի՝ եւ Սամանգարի՝ մտնոյ նա հասաւ Սպիտակ (քաղաքը)՝, ուր գտանուեւ էր խաքանը. վերջինս փախաւ նորա առջեւ:

120 թ. Հայաստանի եւ Ասորպատականի կառավարին էր Մըրվան ի Մուհամմէ:

121 թ. Մըրվան ի Մուհամմէ արշաւեց Հայաստանից եւ եկաւ Սարիի տահմական բերդը, սպանեց, գերեց. գալով երկրորդ բերդը նա նմանապէս սպանեց, գերեց: Ապա մտաւ Ղառնիկ ամրոցը, որտեղ կը գտանուէին թագաւորի գուտարը եւ նորա աթոռը. թագաւորը այնտեղից փախտական բնկաւ խիպով ամրոցը, ուր էր նորա սակեհաւ աթոռը. Մըրվան հետեւեց նորան. այն ժամանակ թագաւորը խաղաղութիւն կապեց նորա հետ՝ տարեկան 1000 սարուկ եւ 100.000 մաւա՝ նորան տալու պայմանով: Մըրվան ապա մտաւ Աղուբթարան երկիրը, որի իշխանը հայտնութիւն հաստատեց նորա հետ, որպէս եւ Տուման երկրի իշխանը: Գալով Համզին երկիրը նա պաշարեց նորա ամրոցը մի ամիս շարունակ, մինչեւ (քնակիչք) խաղաղութիւն կապեցին: Մասդաղ (?) երկիրը Մըրվան նուաճեց խաղաղութեամբ: Արիստուժ բանակելէն նորա հետ հայտնութեան գաշն կնքեցին Տարաբարան, Ֆիլան եւ ծովափնայ բլուր գաւառները, որոնք Հայաստանում Տարաբարանի հանդէպ կը գտանուէին:

126 թ. Եղեգ քերեց Մուհամմէ ի Մըրվանին կառավարիչ Միշադեաբի, Հայաստանի, Մուսուլի եւ Ասորպատականի վերայ, նշանակելով (նորա սրբի) Մըրվանին գաղտնաստանէ գործերի վարիչ եւ տարով նորան մի գաւառ:

132 թ. Ուռնիսում Սայիգ ի. Հիշամ եւ նորա հորեղբորդին այլ բանտարկեալների հետ հանդերձ սպանեցին բանգապետին եւ դուրս ելան բանդից: Խառանի բնակիչք խառան բազմութեամբ կոտորեցին նոցա, ի թիւս որոց եւս Զորբորդ Հայոց իշխան Առաքանին:

1 Թուր թէ Աղուանից երկրում:

2 Jakut կանաւանի Բառեւ-Արաբի (Դերբենդի) մտաւ Համա Բաշառն թերութեան գիւղէ Դերբենդից հտարաւ, այժմ երկամուրու կայսրան:

3 Istaxri յիշում է խաղաղաց մայրաքաղաք Խափի (Հալաբաթեան) եւ Բառեւ-Արաբի մէջ: Ուռնի Բաշառնէրից հիւսիս:

4 Jakut կը յիշէ Բիգր քաղաք խաղաղաց երկրում. պարելու է Դերբենդից հիւսիս այժման Պետրովի քաղաքի մոտերը:

132 թ. Առաւ-Արաբա (ամիրապետը) քերեց իւր եղբայր Առաւ Ջաֆարին Միշադեաբի, Հայաստանի եւ Ասորպատականի վերայ կառավարիչ:

Նոյն թ. (Առաւ-Արաբա) Մաֆֆահ ուղարկեց իւր եղբայր Մանսուրին կառավարչի պաշտօնով Միշադեաբը, Ասորպատական եւ Հայաստան: Կառավարչի օգնականն էր Առաւ Ջաֆար ի Մուհամմէ ի Ալի:

133 թ. յունաց կայսր Կոստանդին արշաւեց Քալի-Քալա (Կարին) եւ բանակեցաւ խիստ դաշտում, առաւ ուղարկելով Կուշան հային, որ պաշարեց քաղաքը: Բնակիչներէրց երկու հայ եղբայրներ պեղեցին պարսպի աւերակ տեղը. Կուշան իւրայիններով նորա մտաւ, սիրեց քաղաքին եւ սպանեց այրերին, իսկ կանանց գերեց:

134 թ. Հայաստանի կառավարիչն էր Եղեգ ի Ռաայդ:

(Էրանս-իւնի):)

Բ. ԽԱՆԱԹԵԱՆՑ



ՍԱՅԵՆԱԳՐԱԿԱՆ

ՄԻԹԹԵՐ ԳՕԹԻ ԳՆՍՍՏՆԵՆԳԻՐԷ ԵՒ ՀՈՅՈՑ ՀԻՆ ՔՈՂՈՔՆԵՆԵՐԿԱՆ ԻՐԵՒԱՆԷՐԸ

ՀԱՏՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԻ

ԴԱՏԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԱՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ
ԸՍՏ ՄԻԹԹԱՐ ԳՕԵԻ

Ե.

ԴԻՊԼՈՄԱՆԻՔ:

(Էրանս-իւնի-ն):

III.

Ըստ "Հայոց Դատաստանագրքի", հոգեւոր կամ եկեղեցական դատաստանին ենթակայ են նախ՝ այն բոլոր գործերը, որոնք վերաբերում են եկեղեցուն — "զեկեղեցւոյ դատաստան եպիսկոպոս հոգացելո", եւ ապա այն բոլոր գործերը, նոյն իսկ աշխարհական, եթէ այդպեղ չկան մարմնաւոր իշխանութեան ներկայացուցիչներ — "եւ ի տեղում, ուր ոչ իցեն թագաւոր կամ իշխանք, պարտ է յեպիսկոպոս տալ զայս յաւանդ, զի գամենայն դատաստանն սոքա հոգացան" (Նախ, գլ. Ե, եր. 26): Ի՛նչ տեսակ գործեր Տարկ ե հասկանալ առաւելու գէպում: Ինչպէս կը տեսնեւ ընթերցողը, Միթթար ԳՕԻ որոշումն այդ առարկայի վերաբերմամբ խիստ առաձգական է. այդ կարգի գործերին քրիստոնէական եկեղեցւոյ հայեացակետով կարելի էր գտնել մի ամբողջ շարք իրաւաբանական երեւոյթներ, որոնք դատաստանական ենթակայութեան տեսակէտից կարող էին տարաձայ-

նութիւններ ու առարկութիւններ առաջ բերել, Այնուամենայնիւ փորձնք գոնէ մօտաւորապէս ուրուագծել Հոգեւոր իշխանութեան ենթակայ դատաստանական գործերի սահմանները, գործերի, որոնք մեր կարծիքով, Մխիթար Գօշը էլ ի նկատի ունէր: Այդ նպատակի համար մեզ կը ծառայէ դատաստանագրքի առաջին մասը, որ յայտնի է «Եկեղեցական կանոնք» վերնագրով: Թէեւ դատաստանագրքի երկու մասերի բովանդակութեան հետ ծանօթանալէս կարելի է նկատել, որ Մխիթար Գօշը իւր այդ երկու բաժանումով չի կարողանում հետեւողական կերպով դասուարկել օրինագրքի առաջինը, այնուամենայնիւ «Հայոց դատաստանագրքի» յիշեալ երկու մասերի բովանդակութիւնն աչքի ածելով, մենք իրաւունք ունինք եզրակացնելու, որ Մխիթար Գօշը ծրագրել էր առաջին մասնում՝ «Եկեղեցական կանոնք» մէջ մուծել միայն այն օրէնքները, որոնք վերաբերում էին Հոգեւոր դատաւարութեանը, իսկ երկրորդ մասում՝ «Աշխարհական օրէնքի» մէջ — օրէնքներ, որոնք միայն աշխարհական — քաղաքացիական գործեր էին պարունակում, ուրեմն եւ ենթակայ էին մարմնաւոր դատաստանին: Դատաւորելով դատաստանագրքի առաջին մասի բոլոր յօդուածներն ըստ իրենց ներքին բովանդակութեանը, մենք հնարաւորութիւն կ'ունենանք մօտաւորապէս որոշելու, որ Հոգեւոր դատաստանի իրաւասութեանը պատկանում էին հետեւեալ իրաւաբանական երեւոյթները:

1. Ինչպէս եւ սպասելի էր Հոգեւոր գործերի շարքն էր դասուում եկեղեցական նուիրապետութեան կազմակերպութիւնն եւ սրա անդամները: Թէ կուտակւոյն եւ թէ քահանաների յարաբերութիւնները դէպի եկեղեցին եւ դէպի ժողովուրդը, Հոգեւորականութեան հասարակական ու ընտանեկան կեանքը, Հոգեւորական անձանց կողմից կատարած բոլոր օրինազանցութիւնները ու յանցարարութիւնները:

2. Եկեղեցական ինչքը եւ սրա պահպանութիւնն, եկեղեցական ու բարձր Հոգեւորականութեան անձնական համարուած ինչքի տարբերութեան սահմանադրումը:

3. Հոգեւորականութեան նիւթական ապահովացումը ծխականների՝ ժողովրդի կողմից:

4. Քաղաքական ընտանեկան իրաւունքը — ամուսնութիւն, ապահարզան, զաւակների կրթութիւն, կանանց առեւանգում, ամուսին:

Ներքի փոխադարձ յարաբերութիւնների թէ ֆիզիկական եւ թէ բարոյական, անորմալ երեւոյթները. մի խօսքով ընտանեկան կեանքի բոլոր կողմերը գտնուում էին Հոգեւոր իշխանութեան բացարձակ իրաւասութեան ներքոյ:

5. Հերետիկոսութիւն, ուրացութիւն եւ ընդհանրապէս եկեղեցական սուրբ խորհուրդների դէմ կատարած ապօրինութիւնները:

6. Ստախոսութիւն, բամբասանք, վերաբերանք եւ մի քանի այլ յանցագործութիւններ քրէական բնաւորութեամբ, որոնք կատարուել են Հոգեւորական դասակարգի ու մարմնաւոր իշխանութեան բարձր ներկայացուցիչների թագաւորի, իշխանների դէմ: Այստեղ հարկաւոր է անգամ եւս շեշտել, որ քրէական բնաւորութիւն ունեցող յանցանքները, նոյն իսկ աշխարհական, քաղաքացիական կեանքում կատարուած, ենթակայ էին զլխաւորապէս, Հոգեւոր դատաստաններին: Այսպէս օրինակ՝ Հայոց դատաստանագրքի երկրորդ մասի ԺԷ յօդուածից երեւում է, որ թագաւորի կամ իշխանների դէմ կատարած ոճիրները ենթարկուում էին Հոգեւոր իշխանութեան իրաւասութեանը. «Եթէ որ թշնամանացէ զթագաւորս եւ զիշխանս անիրաւաբար, պատուհաս կրեսցէ... Եւ զայս դատաստան կտտնել եպիսկոպոսաց եւ վարդապետաց է, զի պատկեր են Աստուծոյ թագաւորը եւ իշխանը»:

Հոգեւոր դատաստանը տեղի է ունենում եպիսկոպոսի նախագահութեամբ: Թէեւ դատաստանագրքի մէջ չի յիշատակուում, թէ որ եպիսկոպոսներն են կատարում դատաւորի բարձր պաշտօնը, բայց եւ այնպէս հայկական եկեղեցու եւ ժողովների կանոնների հիման վրայ կարելի է եզրակացնել, որ միայն թեմակալ եւ որոշ պաշտօններ ունեցող եպիսկոպոսներն էին օժտուած դատաստանական իրաւունքներով եւ այն էլ իրենց ստորագրեալ շրջանների ազգաբնակչութեան վերաբերմամբ: Եպիսկոպոսը պետք է ունենայ ընկերակից դատաւորներ թուով երկու կամ երեք հոգի. «Եւ մեզ նոյնս եւ հաճելի երեքն, զի այլ բազում քան զայս դժուարաբանի յամենայն տեղի» (Նախ. գլ. 2, եր. 31): Եպիսկոպոսի այդ 2—3 ընկերակից դատաւորները պիտի լինեն վարդապետներ, եթէ վարդապետներ չկան, գիտնական քահանաներ ու ասնուաւերք (Նախ. գլ. Ե. եր. 27): Այս տանուաւերի անձնաւորութիւնն, իբրեւ եպիսկոպոսական դատարանի անդամ, Մխիթար Գօշը մեզ չի պարզում, ուստի, ինչպէս իրաւացի

նկատել է Վահան վրդ. Բաստամանը, այդ հանգամանքը մեզ առիթ է տալիս զանազան ենթադրութիւններ անելու տանուտէրերի անձնաւորութեանց մասին: Ցանուտէր բառը մեր ժողովրդի մէջ տարբեր նշանակութիւններ ունի: Ցանուտէր են կոչուում նահապետական մեծ ընտանիքների գլուխները, նմանապէս գիւղապետները կամ գիւղի կառավարիչները, որոնք ճանաչուում են իրրեւ մարմնական իշխանութեան պաշտօնականը: Վերջապէս տանուտէր անունով էին յայտնի մեր պատմական գրականութեան մէջ չայ նախարարներն ու կայուածատէր-իշխանները: Յամենայն դէպս, կարելի է ենթադրել, որ տանուտէր բառը վերջին երկու իմաստով միայն կարող է յարմարութիւն ունենալ գաւառաւորների հարցում, որը այդպէս անորոշ շօշափում է Մխիթար Գօշը¹: Այս վերջին կարծիքը մասամբ հաստատուում է հետեւեալ մի քանի գիտողութիւններով:

Հայոց հոգեւոր, կամ աւելի լաւ ասած, եպիսկոպոսական գաղափարները իր անձով միացած էր թեմակալ եպիսկոպոսի պաշտօնի հետ. ուրեմն դա մի պաշտօնական-վարչական գաղափարն էր, մասնաւորապէս որ գաղափարների միւս անգամ-գաղափարներին ընտրում էր կամ նշանակում ինքն եպիսկոպոսը, որ միեւնոյն ժամանակ կարող էր նրանց ամեն մի վարչական հեռացել իրենց կոչումից: Այդ գաղափարն ըստ մեր ենթադրութեան շարժական բնաւորութիւն ունէր: Հայոց եկեղեցական կանոնների եւ արեւելեան եկեղեցական ժողովների որոշումների համաձայն՝ եպիսկոպոսները պարտաւոր էին յաճախ շրջել իրենց թեմերը, այցելել իրենց յանձնած Տօւր, վանքերն ու եկեղեցիները, վերատուգել կարգապահութիւնն եւ ամեն տեղ գաղափարն անել: Ահա այս գաղափարներին ժամանակ եպիսկոպոսը պէտք էր տեղական ներկայացուցիչներից ընտրեր 2—3 գաղափարներ, որոնք նրա նախագահութեամբ կազմում էին «ատեան», թէ յիրաւի գաղափարներ շրջիկ կազմակերպութիւն ունէր եւ կազմում էր միշտ տեղական հոգեւոր 2—3 անձնաւորութիւններից, երեւում է այն հանգամանքից, որ եթէ գաղափարներ ձայնն ու անշարժական բնաւորութիւն օւնենար, նա անհրաժեշտ պէտք է գտնուէր եպիսկոպոսի աթոռանիստ տեղում, թեմի կենտրոնատեղում, ուր անկասկած միշտ

գտնուում էին՝ հոգեւոր գաղափարների ներկայացուցիչներ՝ թէ վարգապետներից եւ թէ քահանաներից: Սակայն, ինչպէս տեսնում ենք Մխիթար Գօշը աչքի առաւ ունի նաեւ այնպիսի գէպքեր, որ այս կամ այն տեղում եպիսկոպոսը կարող է չգտնել հոգեւոր-գաղափարակիցներ: Իսկ այսպիսի դէպքեր կարող են տեղի ունենալ միմիայն խուլ անկիւններում, թեմի յետ ընկած վայրերում, որտեղ գոյութիւն չունին եկեղեցիներ, վանքեր եւ ընդհանրապէս հոգեւոր-կրօնական հիմնարկութիւններ: Վերջին հանգամանքներում, երբ միանգամայն բացակայում են հոգեւորական անձինք, խօսք չկայ, որ դրանք փոխարէն գտնուէին աշխարհական պաշտօնական անձնաւորութիւններից ի դէմս գիւղապետների եւ կամ տեղական մանր իշխանների ու մեղիքների, որոնք ապրում էին իրենց կայուածքներում: Ահա այս աշխարհական անձնաւորութիւններն են, որոնց, մեր ենթադրութեամբ, ի նկատի է առնում Մխ. Գօշը «տանուտէր անունով» արանցից եր եպիսկոպոսն ընտրում աշխարհական գաղափարակիցներ եւ իւր նախագահութեամբ կազմում գաղափարական «ատեան»:

Արդ հարց է ծագում. ինչ իրաւասուութեամբ էին օժտուած եպիսկոպոսից ընտրուած «ատեանի» անդամները՝ թէ հոգեւորականները եւ թէ տանուտէրերը: Արդեօք սրանք էլ բաւական են նշանակութեամբ գաղափարներ էին, այսինքն սրանք էլ իրենց ներկայութեամբ վճռական ձայներ ունէին եպիսկոպոսի հետ միասին գաղափարական որոշումներ արձակելու, թէ լոկ խորհրդակցական գեր էին խաղում: Արդարեւ, այսպիսի հարց ինքնըստինքեան կարող է ծագել, երբ Մխիթար Գօշն իւր սովորութեան համամաս շատ մութ ու անորոշ կերպով է արծարծում այդ խնդիրը: Գաղափարաշարքը ինչ մի տեղ չի պարզում ու բացատրում մեզ, թէ ինչպէս էր կայանում եպիսկոպոսից ընտրուած գաղափարակիցների իրաւասութիւնը:

Վերել առաջագրած մեր հարցին պատասխանելու համար ուշադրութեան առնենք հետեւեալ կէտերը: Մխիթար Գօշն իւր նախագրութեան Ե. գլխում ասում է, «եւ զի թէ ինքն (եպիսկոպոսը) տգէտ իցէ, ի նոցա վճռէն ուսցի գաղափարսն» (Եր. 27), իսկ Զ. գլխում՝ «Այլ զի եպիսկոպոսն, զի նա է առաջին գաղափարը, երկու կամ երեք առ ինքն կայցի որս իմաստունս եւ նորք գաղափարի գաղափարսն»:

¹ «Մխ. Գօշը Գաղափար. Հայոցն Ա. վրդ. Բաստամանի — յառաջաբանութիւն հրատարակողի, Եր. 138:

ոչ միայն զի նորա իրաւանցն վկայք լինին, այլ զի եւ ինքն ի նոցանէ ուսցի զդատաստանն» (Եր. 31): Առաջ բերած խօսքերից եզրակացնում ենք. նախ՝ որ այդ «արս իմաստունս», այսինքն՝ «ատեանի», անդամներին ընտրում է իր հայեցողութեամբ ինքն եպիսկոպոսը: Հետեւապէս վերջինս, իրեւ «անալին դատաւոր», կարող էր ամեն մի ըուպէ այդ անդամներին հեռացնել իրենց պաշտօնից, մանաւանդ կարծիքների տարբերութիւնների ժամանակ. երկրորդ՝ որ եպիսկոպոսը, եթէ ինքը ազէտ եւ անփորձ է իրաւարանութեան մէջ, պէտք է ուսանէր յիշեալ դատաւորակիցներից, այսինքն դատաւարութեան մէջ զեկամբարուելու երնանց կարծիքներով: Մասնաւոր շատ բնորոշ է, որ Միտիթար Գօշը քանիցս կրկնում է դատաստանագրքի մէջ, անուանելով աստեանի 2 — 3 անդամներին՝ «վկայք իրաւանց դատաստանի»:

Արդիշեալ ամօքերը մեզ հիմք են տալիս երկազրելու որ «ատեանի», անդամները ունէին ոչ թէ վճռական, այլ միայն խորհրդակցական ձայն. որ եպիսկոպոսը հիմնուելով իւր ընկերակից դատաւորների յայտնած կարծիքների ու խորհրդների վրայ, իրեւ «անալին դատաւոր», եւ իրեւ պաշտօնական-վարչական անձն, որին միայն պատկանում էր դատաստանական իրաւասութիւնը, ինքն էր արդէն որոշումներ կայացնում եւ յայտարարում դատաստանական վճիռները: Այստեղ աւելորդ չէ լինել կրկին շեշտել, որ այդ ընկերակից դատաւորները պէտք է լինէին հոգեւոր դատակարգից, որը հանդիսանում էր իրեւ միակ ինտելլիգենտ մտաւորապէս զարգացած տարրը հասարակութեան մէջ. եւ միայն ծայրահեղ դէպքում՝ հոգեւորական անձինքների քացաւկայութեան միջոցին՝ հրաւիրւում էին աշխարհական դատաւորակիցներ՝ «տանուակերբը»: Այս եւ այն դէպքերում էլ յիշեալ դատաւորակիցները իրենց կոչումով եւ պաշտօնական դիրքով ստորագրեալ էին եպիսկոպոսին, իրեւ բարձրաստիճան հոգեւորականին, ուրեմն եւ անկարող էին վերջինիս հետ համադրօ դատաստանական իրաւունքներ վայելել:

Հայոց դատաստանագրքի մէջ ներկայացրած այս սեսակ դատաստանական կազմը մեզ տարօրինակ չէ թուայ, եթէ նկատողութեան առնելը զանազան հին ժողովրդների իրաւունքի պատմութեան մէջ գոյութիւն ունեցած հոմանիշ երեւոյթները:

Հին հնդկական իրաւունքի համաձայն, թագաւորը, որ միաժամանակ համարւում էր եւ դատաւոր, պարտաւոր էր դատաստանաւարութեան մէջոցին իր մօտ ունենալ գիտնական, օրէնքների մէջ փորձաւոր եւ ծմբարասներ բրահմաներ, որոնք միմիայն խորհրդակցական ձայներով էին օժտուած, ուստի եւ կոչւում էին *matrin*, որ կը նշանակէ խորհրդատու:

Աթէնքում առաջի երեք արիստոսներից իւրաքանչիւրն ընտրւում էր իւր համար երկու դատաւորակիցների, որոնք նա ըստ իւր ցանկութեան ամեն մի ըուպէ կարող էր հեռացնել իրենց պաշտօնից:

Շատ նմանօրինակ փաստեր գտնում ենք հին հռոմէական իրաւունքի մէջ, որտեղ դատաւորների խորհրդատուները յայտնի էին *assesores* անունով, ընտրւում էին իրաւագիտութեան մէջ հմուտ անձինքներից — *iuris studiosi* եւ կազմւում էին դատաւորի հետ այսպէս անուանած — *consilium*: Հին Իտալիայում Յմուլիուս թագաւորը Ռէյա Սիլվիայի վրայ մահուան դատավճիռ կայացնելիս ստիպւած էր եղել խորհրդակից դատաւորներ հրուիրել: Կիկերոնը Պերրէի գէմ արտասանած ամբաստանական ճառի մէջ շեշտում է այն հանգամանքը, որ վերջինս մի անգամ կատարել է քրէական մի դատաստան իւր սովորական դատաւորակիցների քացակայութեամբ¹, Հռոմէական նուաճած գաւառներում իւրաքանչիւր գաւառագետ (*praesides provinciarum*) իւր հայեցողութեամբ ընտրւում էր դատաւարութեան համար իրեն դատաւորակիցներ²:

Հին գերմանական իրաւունքի համեմատ դատաստան էր անում միշտ իշխանը — *Fürst*, որի ներկայութեամբ ընտրւում էին դատաւորակիցներ — *Rachimburgii sedentes*, որոնք ունէին միայն խորհրդակցական ձայներ իւր կարողութեան ժամանակ ընտրւում էին — *Schöffen* (*Scabinii*):

¹ Manu, 8, 9 նաւ. Vajnavalkya 2, 3:

² Cicero in Verrem, act. sec. 1, § 68-75; act. sec. 5, § 10-12:

³ Cicero in Verrem, act. sec. 2, § 73:

(Ըրանակիւն)

Պ. ՍՄՈՂԻՆԵՅՍ

ՅԵ